Australian Human Rights Commission
everyone, everywhere, everyday

Բողոք ներկայացնելը

Ավստրալիայի մարդու իրավունքների հանձնաժողովը անկախ մարմին է, որը հետաքննում և լուծում է բողոքներ սեռի, ռասայական, հաշմանդամության և տարիքային ապօրինի խտրականության, Աշխատանքային միջազգային կազմակերպության III-ի (ILO III) խտրականության և մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ:

Ի՞նչի մասին կարող եք մեզ բողոքել

- ***Սեռի խտրականությունը*** ներառում է սեռական ոտնձգություն և խտրականություն՝ սեռի, սեռի ինքնության, միջսեռային կարգավիճակի, հղիության, ամուսնական կամ հարաբերության կարգավիճակի, կրծքով կերակրման, ընտանեկան պարտականությունների և սեռական կողմորոշման հիման վրա:
- ***Հաշմանդամության խտրականությունը*** նեառում է խտրականություն՝ հիմնված ֆիզիկական, մտավոր, զգայական, ուսման և հոգեբուժական հաշմանդամության վրա; հիվանդությունների կամ վառառողջության; բժշկական իրավիճակի; աշխատանքի հետ կապված վնասվածքների; նախկին, ներկա և ապագա հաշմանդամությունների վրա, հաշմանդամության օժանդակ միջոցների; կենդանիների օժանդակության և կապակցությունը հաշմանդամություն ունեցող անձի հետ:
- ***Ռասայական խտրականությունը*** ներառում է ռասայական ատելություն և խտրականություն՝ ցեղի,գույնի, ծագման, ազգային կամ էթնիկական ծագման և ներգաղթի կարգավիճակի հիման վրա:
- ***Տարիքային խտրականությունը*** նեռառում է խտրականություն՝ հիմնված շատ երիտասարդ կամ շատ ծեր լինելու վրա:
- ***Աշխատանքի միջազգային կազմակերպության III-ի խտրականությունը*** ներառում է աշխատանքի խտրականություն՝ կրոնի, դատվածության, արհմիությունների գործունեության, քաղաքական տեսակիի և սոցալական ծագման հիման վրա:
- ***Մարդու իրավունքները*** ներառում են գործողություններ Դաշնության կողմից կամ նրա անունից, որոնք ենթադրաբար խախտում են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային հատուկ գործիքները, ինչպիսիք են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան:

Դուք կարող եք բողոք ներկայացնել անկախ այն բանից, թե որտեղ եք ապրում Ավստրալիայում, և ոչ մի ծախս չկա բողոք ներկայացնելիս: Բողոք ներկայացնելու գործընթացի քայլերը շարադրված են ստորև:

Հարցում ներկայացնել

- Եթե դուք վստահ չեք, արդյոք կարող եք բողոք ներկայացնել որևէ հարցի մասին, դուք կարող եք կապվել հանձնաժողովի Ազգային տեղեկատվության ծառայության հետ՝ զանգահարելով **1300 656 419** կամ էլ. փոստով՝ infoservice@humanrights.gov.au

- Մենք կարող ենք ձեզ ուղարկել բողոքի դիմումի ձև՝ սկսելու ձեր գործընթացը:

- Եթե մենք չկարողանանք ձեզ օգնել, մենք ձեզ կհղենք այն անձանց, ովքեր կարող են օգնել:

Բողոք ներկայացնել

- Բողոքը պետք է լինի գրավոր: Դուք կարող եք լրացնել բողոքի դիմումը և մեզ փոստով կամ ֆաքսով ետ ուղարկել կամ դուք կարող եք բողոք ներկայացնել առցանց մեր կայքում՝ www.humanrights.gov.au:

- Դուք կարող եք բողոք ներկայացնել ձեր նախընտրած լեզվով և մենք կարող ենք օգնել ձեզ գրել ձեր բողոքը, եթե անհրաժեշտ լինի:

- Դուք իրավաբանի կարիք չունեք բողոք ներկայացնելու համար:

- Եթե չկարողանանք զբաղվել ձեր բողոքի հարցով, մենք ձեզ կբացատրենք, թե ինչու:

Հետաքննություն

- Մենք ձեզ հետ կկապվենք զրուցելու ձեր բողոքի վերաբերյալ և հնարավոր է, որ խնդրենք ձեզ տրամադրել լրացուցիչ տեղեկություն:

- Ընդհանրապես, հանձնաժողովը կկապվի այն անձի կամ կազմակերպության հետ, որի մասին բողոքում եք և նրանց կտրամադրի ձեր բողոքի օրինակը: Հնարավոր է, որ մենք խնդրենք նրանց տրամադրել հատուկ տեղեկություն և/կամ ձեր բողոքին պատասխան: Հանձնաժողովին տրամադրված տեղեկությունը ձեր բողոքին ի պատասխան կարող է ընդգրկել անձնական, ներառյալ գաղտնի, տեղեկություն ձեր մասին:

- Որոշ դեպքերում հնարավոր է, որ մենք որոշենք չշարունակել զբաղվել ձեր բողոքի հարցով: Եթե սա տեղի ունենա, մենք ձեզ կբացատրենք, թե ինչու:

- Հնարավոր է, որ մենք ձեզ հետ քննարկենք՝ փորձելու բողոքը լուծել հաշտեցման միջոցով:

Հաշտեցում

- Հաշտեցում նշանակում է, որ մենք փորձում ենք օգնել ձեզ և այն անձին կամ կազմակերպությանը, որոնց մասին բողոքում եք, որպեսզի գտնել այդ հարցի լուծման միջոց:
- Հաշտեցումը կարող է տեղի ունենալ դեմ-առ-դեմ հանդիպման ժամանակ, որը կոչվում է <<հաշտեցման խորհրդակցություն>> կամ հեռախոսային խորհրդակցության միջոցով: Որոշ դեպքերում բողոքները կարող են լուծվել էլեկտրոնային նամակների փոխանակման և հաշտարարի հետ զրույցների միջոցով:
- Բողոքները կարող են լուծվել տարբեր եղանակներով, օրինակ՝ ներում խնդրելով, քաղաքականության փոփոխմամբ կամ փոխհատուցմամբ:

Հնարավոր դատական գործ – սեռի, հաշմանդամության, ռասայական և տարիքային խտրականություն

- Հանձնաժողովը իրավասություն չունի որոշելու, արդյոք ապօրինի խտրականություն է տեղի ունենալ:
- Եթե ձեր բողոքը լուծված չէ կամ դադարեցվել է ինչ-որ պատճառով, դուք կարող եք դիմել դատարան հարցի լուծման համար: Դատարանը կարող է որոշել, արդյոք ապօրինի խտրականություն է տեղի ունեցել:
- Դուք ունեք 60 օր այն պահից , երբ հանձնաժողովը դադարեցնում է բողոքի քննարկումը, որպեսզի հայցադիմում ներկայացնեք Ավստրալիայի Դաշնային շրջանային դատարան կամ Ավստրալիայի Դաշնային դատարան:
- Հանձնաժողովը չի կարող հայցը ներկայացնել դատարան ձեր փոխարեն կամ ձեզ օգնել ներկայացնել ձեր հայցը դատարան:
- Դուք պետք է խորհրդակցեք իրավաբանի կամ իրավաբանական ծառայության հետ, եթե ցանկանում եք դատարան դիմել:

Որոշում/Զեկուցում – Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) III-ի խտրականություն և մարդու իրավունքներ

- Եթե բողոքը չի լուծվել կամ դադարեցվել է ինչ-որ պատճառով, հանձնաժողովի նախագահը կարող է որոշել, արդյոք ԱՄԿ III-ի խտրականություն կամ մարդու իրավունքների խախտում է տեղի ունեցել:
- Եթե նախագահը համոզված է, որ խտրականություն կամ մարդու իրավունքների խախտում է տեղի ունեցել, նախագահը կարող է այդ գործի մասին զեկուցել դաշնային գլխավոր դատախազին: Զեկույցում նախագահը կարող է առաջարկել

փոխհատուցում անձի կողմից կրած որևէ վնասի կամ վնասվածքի համար: Զեկույցը կարող է ներկայացվել խորհրդարանում:

- Խտրականության և մարդու իրավունքների մասին նախագահի որոշումների օրինակներ հասանելի են հանձնաժողովի կայքում՝ http://www.humanrights.gov.au/publications/reports-minister-under-ahrc-act.

Ո՞րտեղ կարող եմ գտնել լրացուցիչ տեղեկություն

Ավստրալիայի մարդու իրավունքների հաձնաժողովի կապի տվյալներն են.

Հեռախոս
Ազգային տեղեկատվության ծառայություն՝ 1300 656 419
TTY: 1800 620 241
NRS 133 677
Ֆաքս՝ (02) 9284 9611

Եթե դուք թարգմանչի կարիք ունեք, կարող եք զանգահարել **131 450** և խնդրել միացնել Ավստրալիայի մարդու իրավունքների հանձնաժողովի հետ:

Եթե խուլ եք կամ լսողության խանգարում ունեք, դուք կարող եք մեզ հետ կապվել TTY-ով՝ 1800 620 241 հեռախոսահամարով: Եթե խուլ եք և լսողության կամ խոսքի խանգարում ունեք, դուք կարող եք նաև կապվել մեզ հետ Ազգային փոխանցման ծառայության միջոցով (NRS)՝ 133 677 հեռախոսահամարով: Եթե դուք կարիք ունեք Auslan թարգմանչի, ապա մենք կարող եք կարգադրել այն ձեզ համար:

Եթե դուք կույր եք կամ տեսողության խանգարում ունեք, մենք ձեզ կարող ենք ըստ պահանջի տեղեկատվություն տրամադրել այլընտրանքային ձևաչափերով:

Փոստ

GPO Box 5218
Sydney NSW 2001

Առցանց
Էլ. փոստ՝ infoservice@humanrights.gov.au
Կայք՝ www.humanrights.gov.au

Դուք կարող եք բողոք ներկայացնել առցանց, այցելելով՝ http://www.humanrights.gov.au/complaints/lodging-your-complaint.

Ընդհանուր իրավաբանական ծառայություն

Եթե մտածում եք բողոք ներկայացնել, դուք կարող եք ստանալ իրավաբանական խորհրդատվություն: Կան համայնքային իրավաբանական ծառայություններ, որոնք կարող են անվճար խորհրդատվություն տրամադրել խտրականության և ոտնձգությունների վերաբերյալ:

Դուք կարող եք դիմել Իրավաբանական օգնության կազմակերպություն՝ (https://www.nationallegalaid.org/for-individuals/) կամ ձեր մերձակա համայնքային իրավաբանական կենտրոն՝ (www.naclc.org.au/directory):

Հրաժարագիր. Այս տեղեկագրի մեջ ներկայացված տեղեկատվությունը նախատեսված է միայն որպես ուղեցույց: Այն իրավաբանական խորհրդատվության փոխարինող չէ: